

ՀՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

# ԱՐՎԵՍՏԻ ԴԱՍԵՐ

*Մարկենաշար*

ԳԻՐԵ ԵՐՐՈՐԴ. ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐ



ԵՐԵՎԱՆ  
«ԳԻՐԵ» 2009

ՀՏԴ 75/76 (479.25)

ԳՄԴ 85.143(2Դ)

Ա 939

Կազմող՝ ՌԻՄԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ  
Խմբագիր՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Ա 939 Արվեստի դասեր: Երվանդ ՔՈՉԱՐ /Կազմ. և  
առաջարանի հեղ.: Ռ.Հայրապետյան: Խմբագր.:  
Դ.Սարգսյան.- Գիրք 3.- Եր.: Գիրք, 2009.- 52 էջ:

Մատենաշարի 3-րդ գիրքն է: Այն նվիրված է աշ-  
խարհահոչակ ճկարիչ-քանդակագործ Երվանդ Քո-  
չարին: Ցրատարակվում է արվեստագետի ծննդյան  
110-ամյակի առթիվ:

Ա 4903020000  
702(01)20067 2009թ.

ԳՄԴ 85.143(2Դ)

ISBN 978-99930-65-45-6

## ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Յայ և համաշխարհային կերպարվեստի անդաստանում լեզենդ դարձած մեծ արվեստագետը՝ Երվանդ Քոչարն իր ստեղծագործական կյանքի ընթացքում մշտապես խորհել է արվեստի խնդիրների շուրջը: Իրեն հուզող ստեղծագործական մտածելակերպը լավագույնս բացահայտել է թե՛ գրավոր, և թե՛ բանավոր խոսքով, որոնք առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում ինչպես հետազոտողների, այնպես էլ ընթերցողների լայն շրջանների համար՝ նրա մտքերը, ասույթները բացառիկ խորն են և իմաստալից:

Այն ընթերցողին թույլ է տալիս ծանոթանալ արվեստագետի գեղագիտական հակումներին, որոշակի պատկերացում կազմել նրա բարոյական կերպարի ու խառնվածքի վերաբերյալ:

Դու պիտի բարձրանաս Յայաս-  
տանում ճիշտ այնպես, ինչպես  
Եֆեյան աշտարակը՝ Փարիզում:

Եղիշե Զարեւս

Ստեղծագործողներ կան, որոնց անունները արվեստի պատ-  
մությունը հիշելու է առանձնահատուկ սիրով: Դրանք ի վերուստ  
արվեստին կոչված ու արվեստին նվիրաբերված անհատներն են:  
Նրանք հաստատում են իրենց ստեղծագործական «ես»-ը և քող-  
նում անգնահատելի անանց արժեքներ: Այդպիսին էր Երվանդ Քո-  
չարը՝ բացարիկ երևոյթ ժամանակակից հայ և հանաշխարհային  
արվեստի պատմության մեջ: Նրա ստեղծագործություններով կա-  
րող է հպարտանալ 20-րդ դարի յուրաքանչյուր քաղաքակիրք  
մշակույթ: Նա ստեղծեց չափազանց լայն ընդգրկում ունեցող ար-  
վեստ՝ կենդանի ու խոսուն կերպարների մի ամբողջություն: Իբրև  
գեղանկարիչ, գծանկարիչ և քանդակագործ՝ Երվանդ Քոչարը  
բացարիկ երևոյթ է ոչ միայն ազգային, այլև հանաշխարհային  
կերպարվեստի պատմության մեջ ընդհանրապես:

Երվանդ Քոչարը ծնվել է Թիֆլիսում 1899 թվականին, ավար-  
տել է Ներսիսյան դպրոցը: Սովորելու տարիներին միաժամանակ  
հաճախել է նկարչական դպրոց, որտեղ նրա ուսուցիչը մեծն նկա-  
րիչ Եղիշե Թաղյանոյանն էր: Աշակերտական տարիներին հրա-  
ժեշտ տալու պահին հանդես է եկել անհատական ցուցահանդես-  
ներով, որը ճանապարհներ բացեց մեկնելու Մոսկվա, Փարիզ, Վե-  
նետիկ... Քսան տարեկան հասակում ավարտելով Մոսկվայի գե-  
ղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության  
բարձրագույն դպրոցի առաջին կուրսը՝ նա արդեն ճանաչված գե-  
ղանկարիչ էր:

Ստանալով խորը ու հիմնավոր գիտելիքներ՝ Քոչարը դասա-  
վանդել է Թիֆլիսի բարձրագույն տեխնիկական արվեստանոցում  
որպես գեղանկարչության պրոֆեսոր: 1923թ. գիտելիքները խո-  
րացնելու նպատակով մեկնել է Վենետիկ, այնուհետև՝ Փարիզ, որ-  
տեղ սկիզբ է դրել գեղանկարչության մի նոր ուղղության՝ «նկար-  
չություն տարածության մեջ», որով ոչ միայն նոր խոր է ասել,

այլև զարմանք ու հիացմունք է պատճառել շատերին:

Դայտնի արվեստաբան Վալդեմար Ժորժը գրում է. «Քոչարի տարածական նկարչությունը ժամանակակից արվեստի նվաճումներից է»: Մեծ արվեստագետը նորարար է և գեղանկարչության, և քանդակագործության, և գրաֆիկայի բնագավառներում: Պրատուն, ամեն ինչում խորամուխ լինելու ձգտումներով օժտված արվեստագետը տարված է նաև գյուտարարությամբ, որոնցից մեկը վերաբերում է մոմաներկերի պատրաստման տեխնոլոգիային: Նա այդ ներկերով կերտեց հանճարեղ երաժշտի, մեծ երգահան՝ Կոմիտասի հիասքանչ դիմանկարը: Մարտիրոս Սարյանը, ոգևորված այդ հայտնագործությամբ, նույն տեխնիկայով նկարել է Երվանդ Քոչարի դիմանկարը:

Տաղանդաշատ արվեստագետը որքան ավանդական էր, նույնան էլ ընդունակ ընկալելու արվեստի նորագույն միտումները՝ միշտ հարազատ մնալով իր ինքնությանը: Ինքնահաստատման ճանապարհին Քոչարը երթեք չկորցրեց իր անհատականությունը: Նա դեռևս 1930-ական թվականների սկզբին Փարիզում կողք կողքի ապրում ու ստեղծագործում էր այնպիսի աշխարհահոչչափ մեծությունների կողքին, ինչպիսիք էին Պիկասոն, Մատիսը, Լեմեն, Լյոււսան, Շագալը... Փարիզյան ցուցահանդեսների կատալոգներում, պարբերականներում, աշխարհում հայտնի այդ համաստեղությունների կողքին, հաճախ հանդիպում ենք նաև Երվանդ Քոչարի անվանը: «Տասը տարի շարունակ ես իմ աշխատանքներով մասնակցում էի ցուցահանդեսների Պիկասոյի, Մատիսի, Կարիկոյի հետ մեկտեղ: Այս, ես անուն ունեի, իմ նկարները գնում էին և իհմա էլ պահպանվում են Զիկագոյում, Մանեստրում, Լուվրում, մեկը ստվորական գեղանկար է, մյուսը՝ գեղանկարչություն տարածության մեջ»:

Փարիզի լավագույն ցուցասրահները, Ֆրանսիայի ժամանակակից արվեստի թանգարանները ցուցադրում էին նրա ստեղծագործությունները, անվանի արվեստագետներն ու քննադատները գրում էին Քոչարի մասին:

Տասներեք տարի ապրելով և հարազատի զգացողությամբ կապված լինելով Փարիզին՝ Քոչարը չկարողացավ հաղթահարել հայրենաբաղծության հզոր զգացումը: «Ես չէի մտածում, թե Փա-

բիզում երկար կմնամ: Բայց մի՞թե որևէ բան կախված է մեր ցանկությունից»:

1936թ. Քոչարը վերադարձավ Դայաստան: Լինելով խորապես ազգային արվեստագետ՝ հայրենիքում կանգնեցնում է բազում քանդակներ, այդ թվում՝ հայ ժողովորի պատմական անցյալի և նրա հերոսական պայքարի խորհրդանշիցը դարձած «Սասունցի Դավիթ» կորողային քանդակը, որտեղ մեծ վարպետությամբ արտահայտված է հայ ժողովորի եպիկական հերոսի ուժն ու հզորությունը: Այս իրավամբ համարվում է հայ արվեստի մեծագույն նվաճումներից մեկը, և զուր չէ ասված, որ եթե Քոչարը միայն այս արձանը ստեղծեր, բավական էր, որ անմահանար:

Նոյն թեմայով շնորհաշատ արվեստագետը աշխատել է գրաֆիկայի ժանրում: «Սասունցի Դավիթ» եպոսի նկարազարդումների հիմասքանչ շարքը ժայռերի վրա փորված պատկերներ է հիշեցնում: Այդ աշխատանքը Քոչարի գրաֆիկական արվեստի բարձրագույն դրսւորումներից է:

Մեկը մյուսին հաջորդեցին կերպարվեստի բազմաթիվ գլուխգործոց կտավներ, քանդակներ, նույր գծային ճեպանկարներ:

Դիմանկարի ժանրում նոյզես Քոչարն ասել է իր ուրույն խոսքը: Լինելով նաև խորաթափանց դիմանկարիչ՝ նրա ստեղծած դիմապատկերները կենդանի են ու հնչել: Ուշագրավ է «Ինքնանկարը» ստեղծագործությունը՝ վլոնած կարմիրի և կապույտի համադրությամբ: Այն դիտողին գրավում է նտքի իմաստության ու գեղեցկության ներդաշնակությամբ: Քոչարը կերտել է նաև հայ մշակույթի գործիչների բազում դիմանկարներ, որոնց մեջ առանձնանում են Կոմիտասի, Սայաթ-Նովայի, Խաչատուր Աբովյանի և այլոց կերպարները քոչարյանական մեկնաբանությամբ:

Քոչարը փիլիսոփա արվեստագետ է: Նրա յուրաքանչյուր գործ փիլիսոփայություն է մարդու, կյանքի, ժամանակի: Դրա վառ վկայությունն են կերտած դիմանկարները, մեր ազգային եպոսի առանցքային հերոսներ՝ Սասունցի Դավիթն պատկերող գրաֆիկական աշխատանքները, մարմնավորած յուրաքանչյուր քանդակը, գեղանկարչական ու գրաֆիկական սքանչելի աշխատանքները:

Մինչև իր կյանքի ավարտը հայրենիքը դառնում է Քոչարի ստեղծագործությունների գլխավոր և անփոփոխ թեման: Արվես-

տի բարձր, լուսավոր գաղափարներին ծառայելու ձգտումը Թոչարի մոտ ներդաշնակվում է հայրենիքի հանդեպ տածած անհուն սիրով:

Մեծ արվեստագետը սերունդներին ժառանգել է հիասքանչ, իր ուրույն դեմքն ունեցող բազում գլուխգործոցներ, որոնք զարդարում են աշխարհի շատ ու շատ խոշոր քաղաքների՝ Փարիզի, Մոսկվայի, Լոնդոնի, Նյու Յորքի, Վենետիկի երևելի քանգարանները և մասնավոր հավաքածուները։ Բազում գործեր իրենց մշտական հանգրվանն են գտել Երևանում հիմնված Երվանդ Թոշարի քանգարանում։

ՈՒՍԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

# ՔՈՉԱՐՆ ԻՐ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## ՏԱՐԱԾԱԿԱՆ ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

### ՈՒՂԵՐՁ

Բոլոր նրանց, ովքեր տեսնում ու լսում են վաղվա քայլերն այսօր՝ արվեստագետներին, սիրողներին, քննադատներին, առևտուականներին, բոլորին, բոլորին...

Փարիզից Մոսկվա, Նյու-Յորքից Լոնդոն, Պեկինից Բեռլին կոչ է հղվում...

Տարածության նվաճումը...

Ուղիղկապը վերացրեց անտեսանելի ծածկույթները, որոնք թաքցնում էին մեր հոգիների հեռավոր տեսիլքները:

Ուղիղկապը տակնուվար արեց մեր աշխարհի երեք չափումները, որոնք խլացնում էին մեր սրտի ձայներն ու ճիշերը:

... Տարածության նվաճումը...

Արվեստագետ, ազատվիր քո հարք մակերեսից, որը սքողում ու կլանում է առարկաները:

Ազատագրիր գեղանկարչությունն իր հարք մակերեսից: Գեղանկարչությունը տեղափորիր տարածության մեջ...

Սավառնակը մարդուն պոկեց իր երկնային քայլքից, մարդն անջատվել է երկրի մակերևույթից և թևերը տարածում է տարածության մեջ...

Արվեստագետ, ձերբազատվիր կտավի մակերեսից և գեղանկարչությունը տեղադրիր տարածության մեջ...

\* \* \*

Թևավոր մարդ. նկարչություն տարածության մեջ: Իմ ամենամեծ գոհացումն այն է, որ կարողացա օդափոխել Եվկլիդեսի ուղեղը. բաց քանդակագործություն:

Արևանտյան գեղանկարչությունը, սկսած Վերածննդի դարաշրջանից, խորիրդանշորեն նվաճեց տարածությունը (խորություն հեռանկարչության միջոցով), կուրիզմը դեն նետեց այն: Նա կրկին գրավեց տարածությունը: Աբստրակտ գեղանկարչությունը,

մշտապես պարզեցվելով, անշեղորեն պահպանում էր կորիզմի այդ նվաճումը: Երբ նկարիչ արստրակցիոնիստները տեսան, որ երկու չափումներում այլևս անելիք չունեն, գեղանկարչությունը կամ պիտի մեռներ, կամ Մոնդրիանի վերջին քառակուսում ընդուներ միակ կենդանի հնարավորությունը՝ վերցնել երրորդ չափումը՝ զարգանալ տարածության մեջ: Իրականում՝ նվաճել տարածությունը երեք չափումներում:

\* \* \*

Տարածական նկարչությունն անսահման հնարավորություններ ունի, ոչ միայն նույն ֆիզուրն է ներկայացնում միաժամանակ տարբեր դիրքերով, այլևս մարմնի մասերը դնում է շարժման մեջ...



Տարածական նկարչություն շարժից

\* \* \*

Մինչև այսօր ունեցել է միայն մեկ կոլորիտ, մինչդեռ տարածական նկարչությունը կարելի է սկսել մաժոր գամայով, վառ գույներով և վերջացնել մինոր և նվազուն գույներով այնպես, ինչպես երաժշտությունը, բանաստեղծությունը կամ պարը ունեն այդ հնարավորությունը՝ փոփոխել տրամադրությունը, տեղը և գործունեության տեսակը՝ առանց որևէ ձև մերժելու կամ ժխտելու:

...Ին նկարներն ել դուրս են գալիս շրջանակից, կտավի երկարությունից և գրվում են նրանունություններունից, անկախ և առանձին...

\* \* \*

Ես համոզված եմ, որ ինչպես Ունեսանսը նոր դարագլուխ բացեց նկարչության մեջ՝ պերսպեկտիվը հայտնաբերելով իբրև նոր արտահայտչամիջոց, այնպես էլ Տարածական նկարչությունը նոր դարագլուխ կրացի՝ նկարչությունը վերջնականապես պոկելով հարթությունից և դնելով տարածության մեջ՝ իբրև կազմավորված, անկախ ու ամբողջական օրգանիզմ:

\* \* \*

Մինչ օրս եղած նկարչությունը առարկան կարող է պատկերել միայն մի կողմից, և դա իր ճակատագիրն է եղել, մինչդեռ ես կարող եմ առարկան, մարդուն, պեյզաժը պատկերել իմ ցանկացած կողմերից միաժամանակ, առանց մարդը կամ առարկան քանդակելու:

Եթե դու ուզեմաս ժողովորին լավ երևալ, բեմ ես բարձրանում. դերասանը, ճառախոսը բեմից են խոսում: ճիշտ այդպես են իմ պատվանդանները, իսկ եթե արձան են իիշեցնում իմ գործերը, դա շատ բնական է, որովհետև իմ նկարչությունը արձանի պես ճիշտ տարածության մեջ է, բայց արձանը կարող է նստած, կանգնած, ծնկի եկած կամ այլ վիճակների մեջ միաժամանակ ներկայացնել նույն ֆիգուրը:

## «ՍԱՍՈՒՑԻՑԻ ԴԱՎԻԹ»

### ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Սասունցի Դավթի հերոսական կերպարը վայուց է հոլգել ու ստեղծագործական երկար մտորումների տեղիք տվել ինձ: Նեռևս աշակերտական նստարանից ինձ գրավել է մեր անմահ էպոսը, որը դարեր շարունակ մշակվելով ու կատարելագործվելով դարձել է մի իսկական գրական մոնումենտ հայ ժողովրդին:

Ես սկսեցի ծանոթանալ Էպոսի տարբերակներին, որոնց թիվը այժմ հասել է շուրջ 60-ի: Յետզիետե իմ պատկերացման մեջ և ապա կավից ու գիպսից ծնվեց ապագա քանդակը:

Եվ ահա առաջին անգամ հայ ժողովրդի պատմության մեջ, Երևանում կանգնեցվեց Դավթի արձանը: Դա 1939 թվականին էր, մեր Էպոսի 1000-ամյակի տոնակատարության օրերին:

Արձանը պատրաստված էր գիպսից, որը երկար չղիմացավ ու հանվեց հրապարակից: Ես փոքր ու մեծ ընդմիջումներով շարունակեցի աշխատանքը արձանի վրա, իսկ վերջին երեք տարիները գրեթե ամբողջությամբ նվիրված էին Դավթին:

...Առաջին արձանի կանգնեցումից քսան տարի անց, նույն տեղում կայարանի նոր շենքի ֆոնի վրա, կանգնել է նոր Դավթը, պղնձաձոլ Դավիթը թուրկիկ Զալալուն հեծած:

Ես «Կանգնել է» բառն օգտագործում եմ ըստ սովորության, որովհետև կոնկրետ այս արձանի մասին խոսելիս, ավելի ճիշտ կլիներ օգտագործել «թռչում է» բառը: Դավիթը իր ձիուն հեծած, սուրը հանած թռչում է թշնամու վրա:

Ես մանրամասն չեմ նկարագրի արձանը, դրա համար անհրաժեշտություն չի գգացվում, բայց հարկ եմ համարում ընդգծել, որ աշխատելով նրա վրա, ամեն կերպ ձգտել եմ շեշտել Էպոսի ու նրա հերոսի խաղաղասիրությունը և անսասան կամք՝ պաշտպանել ազատությունը: Այս միտքը քանդակում արտահայտված է հետևյալ կերպ: Պատվանդանի վրա ձիու ոտքերի առջև դրված է մի թաս, որտեղից ջուր է հոսում ավագանի մեջ: Փոխարերական ձևով այդ թասը իրենից ներկայացնում է համբերու-

թյան բաժակը, իսկ ջրով լի ավազանը՝ հեծող ժողովրդի արտասուրքի ծովը: Եցվել է ժողովրդի համբերության բաժակը, արտասուրքի ծով է գոյացել և նոր է միայն Դավիթը սրի դիմել:

Ավելացնեմ նաև մի ուրիշ կարևոր հանգամանք, որը պակաս դժվարություններ չհարուցեց արձանի ստեղծման ժամանակ: Բացի եպոսի գաղափարին հավատարիմ մնալուց, հարկավոր է ցույց տալ, որ Դավիթի կերպարը, որքան առասպելական, հեքիաթային, նույնքան և ռեալ, հողածին է: Չեմ թաքցնի՝ Դավիթի կերպարը և, ընդհանրապես, արձանի մեր լուծումը որոշ մանրամասներում վեճերի առիթ է տալիս: Եվ դա հասկանալի է. չէ՞ որ ամեն մեկը իր սիրելի հերոսին պատկերացնում է յուրովի, ցանկանում է տեսնել ճիշտ այնպիսին, ինչպիսին նա գծագրվում է իր մտապատկերում: Մեր նպատակն է եղել, որքան կարելի է մոտենալ, հանապատասխանել ընդհանուրի պատկերացմանը, իսկ դրան հասնելու համար հարկավոր էր եղել բնագրից, հավատարիմ մնալ եպոսին, հետևապես՝ Դավիթին: Ինչ վերաբերվում է մանրամասնություններին, ապա դրանք էլ իրենց բացատրությունն ունեն, որոնք կարող են լինել, իհարկե, ընդունելի և ոչ ընդունելի: Օրինակ շատերին տարակուսանք է պատճառում Դավիթի անդրավարտիքի, այսպես ասած «կովբոյականությունը» մի տպավորություն, որ առաջանում է դրա փողքերին կարված այժմ մազից պատրաստված երիզների պատճառով: Այստեղ սակայն ոչ մի «կովբոյականություն» չկա: Մեր Դավիթն ու նրա համերկրացիները հագել են ճիշտ այդպիսի անդրավարտիքներ, որոնք ավելի ուշ արագ նվաճողների միջոցով տարվել է Յուսիսային Աֆրիկա, հսկապանիա և ապա՝ Լատինական Ամերիկա: Ունանք զարմանում են Քուուկիկ Զալալու պոչի վրա, որը առաջին հայացքից անբնական մեծ է: Յիշենք սակայն, որ Դավիթ նժոյագը իրական ծի չէ, և եթե մտաբերում ենք եպոսը, նա Դավիթին տեղեկացնում է, որ ինքը պոչով երեք անգամ ավելի մեծ գործ կանի, քան Թուր Կեծակին: Ուրեմն սովորական բնական պոչի մասին խոսք անգամ լինել չէր կարող: Երիվարի հեքիաթայնությանք է բացատրվում նաև պայ-

տերի և սանծի բացակայությունը:

Ինձ երբեմն հարցնում են. «ինչո՞ւ է պատվանդանը արձանից այդքան փոքր»: Իրականում արձանի և պատվանդանի չափսերը այդքան իրարից հեռու չեն: Արձանի բարձրությունն է մոտ 6.5, իսկ պատվանդանը՝ 5 մետր: Այս պրոպորցիան ընդունվել է գիտակցաբար: Պատվանդանի բարձրությունը կխախտեր հուշարձանի և կայարանի շենքի անսամբլը:



Սասունցի Դավիթը հուշարձան

## «ՍԱՍՈՒՑԻՑԻ ԴԱՎԻԹ» ԵՊՈՍԻ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐԻ ՍԱՍԻՆ

- [«Սասունցի Դավիթ»] եպոսի պատկերազարդումները ես արել են Յովսեփ Օրբելու պատվերով, նա այն ժամանակ էրմիտաժի դիրեկտորն էր: Ինձ հրավիրեց Լենինգրադ և պատվիրեց, որ «Սասունցի Դավիթ»

պատկերազարդումներն անեմ: Ես շատ ոգևորվեցի, որովհետև դա ինձ համար շատ մեծ պատիվ էր: Անմիջապես մեկնեցի Երևան: Շատ մտահոգված էի, թե ինչ պետք է անեմ, որ մեծ եպոսի բովանդակությանը համապատասխան լինի, որ արժանի լինի իսկապես կոչվելու իյուստրացիաներ: Շատ մտածելուց հետո եկա այն եզրակացության, որ հայ ժողովրդի ամենաառաջադեմ, ամենաաջապու և տանող ճյուղը ճարտարապետությունն է, ուրեմն քարի կովտուրան է: Դրա համար ին իյուստրացիաները պետք է լինեն քարի ֆակտուրայով, քարը հիշեցնեն: Եվ մտածեցի իբր թե քարեր են, ժայռեր, որոնց վրա Սասունցի Դավիթ ժամանակվանից արդեն փորագրել են եպոսը պատկերող նկարներ: Եվ դրա համար այդ իյուստրացիաներն այն տպավորությունն են թողնում, որ քար են, ոչ թե գծագրություններ:



Սասունցի Դավիթը Բուռկիկ  
Զալալու հետ

## ԻՄ «ՎԱՐԴԱՆ ՄԱՍԻԿՈՆՅԱՆ»-Ը

### Չուշարձանի ստեղծագործական պատմությունից

Ներսիսյան դպրոցի աշակերտ էի և կավագործական խմբակի անդամ, երբ իմ շատ սիրելի ուսուցիչ Արսեն Շահբազյանը ինձ հանձնարարեց ստեղծել Վարդան Մամիկոնյանի կերպարը՝ հարթաքանդակի ձևով: Մինչ այդ հայրս ինձ և քույրերիս համար թղթի վրա շշմեցնող արագությամբ նկարում էր Վարդան Մամիկոնյանի կիսադեմը:

Անցան տարիներ, տասնամյակներ: Եվ ահա «Սասունցի Դավթից» հետո իմ առջև ծառացավ իին երազիս ասպետը՝ Վարդան Մամիկոնյանը: Կարծես ճակատագրական մղումով իրականացրի իմ իղձը: Ինչպիսի՞ն պետք է լիներ Վարդան Մամիկոնյանը, ի՞նչ կերպարանքով: Դեռևս պատանեկությանս տարիներին՝ Ներսիսյան դպրոցում, երբ անցնում էինք Եղիշե, ես այնքան կլանված էի Վարդան Մամիկոնյանի ճառով, որ իհշում եմ՝ մի օր Մանուկ Աբեղյանը դարձավ ինձ.

- Յը՞ քոչարյան, կարո՞՞ն ես նկարել...

Երանի հիմա լիներ Մանուկ Աբեղյանը՝ ոգեշնչող այդ սքանչելի ուսուցիչը, և ասեր՝ արդյոք կարողացե՞լ եմ կերտել Վարդանի վեհ կերպարը:

Այս բոլորը ի մի բերելով՝ կարծես թե ամբողջացավ ցանկացածն կերպարը. Վարդանը պետք է լինի ձիու վրա, մերկացրած սուրը ձեռքին, շարժման մեջ, դիմամիկ: Այդ ոգով և մտահղացմամբ՝ ես գիպսից արեցի մեկ մետրանոց յոթ տարբերակ, բայց դեռ բավարարված չէի: Չնայած Վարդան Մամիկոնյանի ձիավոր արձանը ցուցադրվեց և բարձր գնահատվեց՝ ես դարձալ շարունակում էի որոնել վերջնական կոմպոզիցիոն կերպարը, որն ի վերջո գտա:

...Մահ ոչ իմացյալ մահ է, մահ իմացյալ անմահություն է: Այս բարձր նշանաբանով զրահավորված՝ իմ Վարդանը վահանը գցել է մեջքին և ահարկու սուրը բարձրացրած՝ արշավում է թշնամու վրա: Նա բարոյապես բարձր է թշնամու զորությունից: Նրա դիրքն

արդեն հաղթողի վսեմ դիրք է: Վարդանը նստած չէ ձիու վրա, այլ բարձրացել է մի փոքր, աջ ոտքով հենվել ասպանդակին, որպեսզի էլ ավելի հուժկու լինի թրի հարվածը: Նա ամբողջապես քաց է՝ մարմնի ոչ մի մասը չի պատսպարված, քանզի նա չի վախենում մահից, նա ճանաչում է մահը, նա ընկել է մահը: Իսկ ձին՝ իր հավատարիմ ձին, պետք է ներդաշնակ լիներ տիրոջ հետ, մարդը և կենդանին պետք է իրար լրացնեին: Ուստի ձին էլ տիրոջ նման պետք է բացված լիներ, պետք է ձիու չըս ոտքերն էլ օդի մեջ լինեին: Առջկի երկու ոտքերը պետք է կրկնեին տիրոջ ձեռքերի շարժումը, իսկ ետևի երկու ոտքերը պետք է օդում լինեին: Զիու և տիրոջ միասնությունը՝ ներդաշնակությունը գտնված է. բայց ինպէ՞ս պահել և ձին, և ձիավորը օդի մեջ:

Զիու սմբակների տակից ամպակերտ փոշին բարձրանում և հասնում է ձիու փորատակին: Ահա այն հենակետը, որն, իբրև պատվանդան, պահում է ամբողջ արձանը:

Այս արձանն իր մտահղացմամբ երեք հիմնական կետերով միաննուշ է համաշխարհային արձանագործության պատմության մեջ: Առաջին, ոչ մի տեղ և ոչ մի ժամանակ ձիավոր մոնումենտալ արձանը չի հջոնում վերևից վար: Վարդանը իր ձիով վերևից ներքև է սլանում, և ամբողջ արձանը սուր անկյան ծևով միխրճվում է թշնամու բանակի մեջ: Այս ինքնատիպ լուծումը կամայական չէ, ես կամեցել եմ ասել՝ քանի որ զավթիչները գրավել են մեր սևահողերը, դաշտավայրերը և մեզ քշել դեպի լեռները, ուրեմն մեր հակահարվածը պետք է լիներ լեռներից: Դրա համար Վարդանն իբրև արծիվ վերից է միխրճվում թշնամու բանակի մեջ:

Երկրորդ, այս արձանի ձիու ոտքերը օդի մեջ են:

Եվ երրորդ, ոչ մի տեղ և ոչ մի ժամանակ չի կանգնեցվել ձիավոր արձան, որի սմբակներից ելած փոշին քանդակված լինի:

...Հակառակ այս երևույթին իմ Վարդանի ձին հենված է միայն մի կետի, այն փոշու վրա, որ բարձրացել սմբակներից և հասել է ձիու փորատակը:

...Վարդանի արձանը գաղափարային և շատ կարևոր սկզբունքային առանձնահատկություն պետք է ունենա, որով պետք է

զատվի շատ ու շատ ուրիշ արձաններից, որոնք ներկայացնում են մարտի թունդ պահը: Ի՞նչն է եականը. այն, որ Վարդանը այդ դժվարին պահին, որքան էլ որ ցամանա մեջ է և անդրդվելի, չար չէ, այլ բարի է և մարդկային: Նա պետք է լինի ոչ թե նենգ և դավադիր, այլ նեծահոգի, վեհ, ինչպես վայել է հայ մարդուն, հայ ազգային հերոսին:

Ուզում եմ երկու խոսք էլ ասել Վարդան Մամիկոնյանի դիմագծերի մասին, նրա հագուստ-կապուստի եւ սաղավարտի մասին, և թե ինչ փաստացի տվյալներից եմ օգտվել նրա կերպարը կերտելիս:

Տավոր սրտի, մեզ փաստագրական ոչ մի նյութ չի հասել: Եվ շատ զարմանալի է, որ ժամանակի նկարիչներից և ոչ մեկը չի պատկերել Վարդանանց պատերազմը և ոչ էլ նրա անմահ հերոսին: Չափազանց աղքատ և անօգնական ենք այդ ժամանակներից գրկված լինելով:

Դայ ժողովրդի մեջ անցած դարի 60-ական թվականներին ամրացել և սրբություն է դարձել մի նկար, որ պատկերում է Վարդան Մամիկոնյանին: Այդ նկարը ամեն հայ մարդ, ուր էլ որ լինի, ճանաչում է, իր սրտի ու մտքի մեջ պահում, իբրև Վարդան Մամիկոնյանի կերպար: Բայց, ավաղ, դա ոչ մի կապ չունի ոչ Վարդանի հետ, ոչ նրա դարի և ժամանակի հայ սպարապետի կերպարի հետ: Այդ նկարի պատճությունն այսպիսին է:

1860-ական թվականներին Պետերբուրգում էր ապրում նշանավոր գրականագետ, պատմաբան Կարապետ Եզյանը, որ երազում էր ունենալ և ժողովրդի մեջ տարածել հայ հին հերոսների պատկերները: Եվ ահա մի օր Պետերբուրգի հայ եկեղեցի է մտնում մի հայ ուսանող՝ Ղարաբաղից եկած, արտակարգ գեղեցիկ, խաժակն, գանգուր մազերով և փոքրիկ մորուքով: Եզյանը, նրա դիմագծերի մեջ գտնելով իր երազած հայ հին իշխանների ու հերոսների կերպարը, ուսանողին տանում է նկարիչ Ստեփան Ներսիսյանի մոտ: Նա էլ իր գիտության և կարողության չափով գեղեցկատես բնորդից նկարում է իր Վարդան Մամիկոնյանի՝ սաղավարտով, թիկնոցը սեղմած կրծքին: Բայց ինչո՞ւ Վարդան Մա-

միկոնյանը հռոմեական սաղավարտ պիտի ունենար: Չէ՞ որ նա պարսից զորավար էր և հայոց սպարապետ, ուրեմն նա պետք է ունենար կամ հայոց, կամ պարսից զորականի համազգեստ:

Պատմության մեջ կան և եղել են այնպիսի սխալներ, որոնք ժողովրդի կողմից սրբագրվել են և այլևս ուղղել այդ սխալները՝ կլինի ամենամեծ սխալը գործել՝ խլելով ժողովրդի սրտից ու մտքից այն մտապատճերը, որին հավատում է ժողովուրդը և կապված է դրան դարձերով:

Այդ նկարը ժողովուրդը ջերմությամբ և հավատով է ընդունել:

Ուստի, ես, գիտենալով հանդերձ, Վարդան Մամիկոնյանի պատմական կերպարին չհամապատասխանող այդ կերպարը, գիտակցաբար պահպանեցի, թե՛ սաղավարտը, և թե՛ զգեստավորությունը ընդհանուր առնամբ: Չեմ ուզեցել խարարել ժողովրդի մեջ ամրացած Վարդանի կերպարը:



«Վարդան Մամիկոնյան»  
հուշարձանը

## «ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐԴԱՎԻՐՔԸ» ԿՏԱՎԻ ՄԱՍԻՆ

- Նկարչություն տարածության մեջ: Դա ինձ համար ավելի նախընտրելի, ավելի սիրելի է, որովհետև ժամանակակից արվեստի ամենաբարձր կետն է: Օրինակ, ես ձեզ հետ կարող եմ խոսել մի նյութի մասին, որն իմ սրտին շատ մոտ է և շատ մտքեր է արթնացնում՝ դա իմ «Պատերազմի արհավիրքը» նկարն է, առաջին գործը նկարչության ամբողջ պատմության մեջ սկզբից մինչև մեր օրերը, ընդգրկելով ռենեսանս՝ Միջնադարական և Ռենեսանս արվեստի մասը, ուստի այլոց ու նորագույն նկարչությունը: Ի՞նչ է դա. Իին հույները՝ Էվլիպիդես, Սոֆոկլես, Արիստոֆանես և այլն, իրենց պիեսների մեջ մտցնում էին երգչախումբ և նրա կորիփեյին, այսինքն՝ առաջնորդին: Երգչախմբի միջոցով այդ ժամանակվա հեղինակմերն արտահայտում էին իրենց միտքն ուղղակի կերպով, ոչ թե գործողության միջոցով:

Ենթադրենք, Արիստոֆանը ինչ-որ բաներ գրում է, և երգչախումբն ասում է՝ ահավասիկ, եթե այդպես եղայրասպան կրիվներ լինեն, ժողովուրդը շատ արցունք կրափի:

Պիեսն իր հերթով գնում է: Նրանք մտքերն արտահայտում են ուղղակի: Նկարները պատկերում են, բայց այդ տեսակ բան չի



Պատերազմի արհավիրքը

եղած, որ հեղինակն իր համակրանքը, կարծիքները հայտնի: Օրինակ, ձեզ մի բան ասեմ, որ միտք լավ հասկանաք, վերցնենք ռուսական նկարչության գլուխգործոցներից մեկը, Սուրբիկովի նկարը՝ «Ստրելցների մահապատճեր»: Դա ինչպէ՞ս է. Պետրոս Մեծը նստած է ծիռ վրա, մոայլ կերպով նայում է մի տեսարանի. ստրելցներին կախում են, սպանում են, աքսորում են, ջարդում են: Բայց հեղինակի սիմպատիան ո՞ւմ կողմն է ստրելցների, թե՞ Պետրոս Մեծի: Ոչ որ չի կարող ասել: Նա նկարում է, նկարչության միջոցով դիտողը պետք է հասկանա, թե նա ում կողմը կարող է լինել: Բայց նկարը չի ցույց տալիս դա: Ավելին ասեմ ձեզ. Ուեպինի նկարը հվան Անեղը սպանում է իր տղային: Քիմա Ռեպինը ինքը ո՞ւմ կողմն է տղայի, թե՞ հոր: Տղային է արդարացնում, թե՞ հորը: Չես կարող ասել: Կա այնտեղ, իհարկե, տեսարան, որ հայրը շվարած ցավում է իր տղայի վիճակը, ինքը զգջում է, ըստ երևույթին, սա ուրիշ բան է: Բայց թե հեղինակը ո՞ւմ կողմն է, զգիտենք:

«Պատերազմի արհավիրքը» կտավի մեջ, շատ հետաքրքիր նկարչական գյուտ կա: Նկարի կողքից գալիս է անորոշ տարածությունից մի կին, որը կմախքացած է, նիհարած, ողորմություն ի խնդրում և դեմքը ծածկում է, որովհետև ողորմություն խնդրելու իր փեշակը չէ: Դեմքը ծածկելով, անաշելով է ձեռքը մեկնում: Արդեն պարզ է, որ ասում է. «Եթե այսպես կրվեք, իրար ոչնչացնեք, խաղողը ոտքի տակ տաք, խաղաղության արձանը վայր գտեք և այլն, և այլն, այդպես իրար նկատմամբ ատելությամբ լցված, իրար ոչնչացնելու տենդով բռնված լինեք՝ իհարկե ժողովուրդը շատ արցունք կրափի և շատ ողորմելի վիճակի կհասնի»: Սա առաջին նկարն է, այդպիսի նկար գոյություն չունի ամբողջ պատմության մեջ: Այս տեսակետից, բովանդակության տեսակետից, նորություն է: Բայց նորություն է նաև իմ նկարելու կերպով. այնտեղ բոլոր ֆիգուրները՝ ծիերը, մարդիկ և այլն, բոլորը մեկը մյուսին չեն ծածկում, - կարծես բափանցիկ մարդիկ են, և տարածության մեջ նրանք չեն կորցնում ոչ մի գիծ, ոչ մի ֆորմա: Նկարչական տեսակետից դա էլ նորություն է, բոլորովին նոր բան:

# ԱՐՎԵՍՏԻ ԴԱՍԵՐ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

\* \* \*

Իր գիտակցական կյանքի առաջին իսկ օրից մարդը գնում է Աղամի հետքերով. նա ուզում է ճանաչել ու համտեսել արգելված պտուղը: Ահա թե ինչու ձգուում է գործել, փորձել, կերպափոխել, որոնել, գտնել, և այդ ամենը փաստորեն մեկ նպատակով՝ բացահայտելու, նպատակին հասնելու համար:

Ցանկացած ուսումնասիրություն, փորձ, վերլուծություն ոչ այլ ինչ է, քան ամբողջ տրոհումը մասերի: Դրա համար պետք է կարողանալ առարկան ժանանակի և տարածության մեջ տեսնել: Օրինակ՝ միայն փորձի հիման վրա գիտնականը կարող է սահմանել օդի ընդիհանուր օրենքները:

Արվեստը նկարչից պահանջում է պահը, ակնթարթը կանգնեցնելու կարողություն, գեղանկարիչը կտավի վրա ոչ թե շարժումն է պատկերում, այլ շարժման ձևը: Ակնհայտ է, որ հենց արվեստն է կոչված կերպարը, խորհրդանշից կրելու, սրընթաց կյանքին ասելու՝ կանգ առ: Դետու կյանքը կրկին կընթանա իր հունով, բայց ակնթարթն արդեն կանգնեցված, պատկերված կլինի: Իսկական նկարիչը ձգուում է կայունության այնպիսի ձև գտնել, որը պատրաստ է շարունակելու շարժումը: Ի՞նչ է շարժումը: Շարժումը կյանք է:

Իսկ ի՞նչ է կյանքը: Երթ դեպի մասիր:

Եվ նոյնիսկ կայուն ողջությունը գլորվում է դեպի կյանքի սահմանագիծը՝ նրա վախճանը:

\* \* \*

Ինչպիսի նկարիչ ուզում եք եղեք, ինչ ուզում եք արեք, ամենից առաջ պետք է լինեք գրագետ: Առանց խոր գրագիտության չի կարող լինել ոչ մի արվեստագետ ու արվեստ: Նկարիչը պետք է նկարել իմանա բարիս բազմախորհուրդ բովանդակությամբ, անպայման քաջատեղյալ լինի արվեստի պատմությանը...

Բնությունը կամ մարդուն ծիշտ նկարելը դեռ նկարչություն չէ: Նկարչություն չէ նաև նորարության միտումով նատուրան ծոնոելը, խեղաքյուրելը...

Մենք մեծ արվեստ ստեղծած ժողովուրդ ենք և մեր սրբազնագույն խնդիրը պետք է լինի ճանաչել, խորապես նարսել մեր արվեստը ու ստեղծել բարձր մակարդակի, առաջավոր, մնայուն արվեստ:

\* \* \*

Արվեստի ստեղծագործությունը կարիք ունի անդրադարձումի, հակառակ դեպքում կլինի բացականչություն և ոչ թե երաժշտություն, ժայռ և ոչ թե արձան, քարայր և ոչ թե ճարտարապետություն:

\* \* \*

Խորացած արվեստագետի համար ստվերը այնքան նյութական է, որքան և իրը... և դրանք հավասարապես նկարչական օբյեկտ են:

\* \* \*

Արվեստը ինքը անիրական ճշմարտություն է:

\* \* \*

Սոցիալիստական ռեալիզմը ոչ թե նշանակում է անպայման բանվոր նկարել, բանվորի կյանք, այլ այդ կյանքը ինչպես նկատել: Ամենահետադեմ նկարիչն էլ կարող է բանվոր նկարել, բայց դրանով մեր պատկերացրած արվեստը չի ստեղծվի: Կարևորը վերաբերմունքն է, ոգին, աշխարհայացքը, որ նկարից է բխում:

\* \* \*

Ինձ համար միշտ կարևոր է եղել գիտենալ, ինչ եմ ուզում, ինչին եմ ծգուում... Երկար վեճերի ընթացքում ես միշտ պաշտպանում էի այն տեսակետը, որ նկարչությունը դա նախ և առաջ մտքերի զարգացման, մտածողության երևոյթ է:

\* \* \*

Արվեստում անվիճելի ոչինչ չկա: Զէ՞ որ գեղարվեստական ստեղծագործությունը դա ամհատականությամ շնորհի արտահայտությունն է: Կարևորն այն է, թե ստեղծագործությունը ինչին է ծառայում, ինչին է հավատում և խոնարհվում. քարուն թե չարին, մարդուն թե սատանային՝ մարդկային կերպարանքով:

\* \* \*

Արվեստը միակ տիեզերական լեզուն է:

\* \* \*

Մարդու թեպետև ծնվում է բաց աչքերով, բայց դարերի ընթացքում են բացվում նրա աչքերը... Արվեստագետներն են, որ մեզ տալիս են աչքի լույս և տեսողություն. սա է նրանց վեհ գործը...

\* \* \*

Անեն արժեք գեղեցկություն է դառնում... բայց գեղեցկությունը ամեն արժեքից բարձր է, անգնահատելի:

\* \* \*

Արվեստագետը պետք է լինի ռազմիկի պես մոլեռանդ, հավատքի մեջ ամրացած և աննկուն... Այստեղից է, որ շատ անգամ արվեստագետին վերագրում են մեծամտություն...

\* \* \*

Ակադեմիզմի միակ խոցելիությունը նրանց ընդունված կանոններն են, պրոպորցիաների, չափանիշների անխախտելիությունը, իսկ «դե ֆորմեն» գնում է նաև խախտումների հանուն ֆորմայի սրության, արտահայտչականությունը շեշտելու, կարևորելու:

\* \* \*

...Արվեստում ավելի արժեքավոր է կատարյալ ճանճը, քան անկատար փիղը:

\* \* \*

Ով ուզում է գրի, ինչպիսի բարձր, սքանչելի գաղափարներ ել արտահայտի, թեկուզեւ պատկերավոր ոճով, չի կարող նկարչին կամ քանդակագործին այնքան ցայտուն և արտահայտիչ ներկայացնել, որքան արվեստագետի գործերը կամ գոնե այդ գործերի ռեպրոդուկցիաները, քանի որ նկարչությունն ու արձանագրությունը տեսողական արվեստ են՝ առարկայական, ուրեմն՝ չի կարող որևէ առարկայի նկարագրությունը ավելի հավաստի լինել, քան ինքը՝ առարկան: Դրա համար նկարչի մասին մենագրությունը պետք է զուգորդվի վերատպություններով և անպայմանորեն

բարձրորակ վերատպություններով, հակառակ պարագայում՝ նույնն է, թե ի ծնե կույրին բացատրես կարի ճերմակության մասին:

\* \* \*

Կլասիկական արվեստը վերցնում էր իհն հունական արվեստի առաջադրած գեղեցիկի և մասնավորապես մարդկային մարմնի ընդունված համաշխափությունը և բնությունը սրբագրում էր այդ իսկ ներդաշնակությամբ: Դրան հակառակ՝ ռոմանտիզմը փընտրում էր բնորոշը, տիպականը, թեկուզն դա լիներ համաշխափությանը հակառակ, միայն թե ի հայտ բերեր մարդկային բնավորության առանձնահատկությունները:

\* \* \*

Լուսանկարը կարող է տալ միայն մեկ պատահական և կոնկրետ վայրկյանը մարդու հայացքի, մինչըեռ նկարը, արձանը տալիս են մարդու տևական և բնորոշ հայացքը: Թե ինչպես է դա հաջողվում արվեստագետին՝ արվեստի գաղտնիքն է: Քանի որ երկուսն էլ նույն միջոցի մեջ են գործում և նույն տևողությունն ունեն: Եթե գիշերն արթնացա և նորից այդ մասին սկսեցի խոկալ, հայտնության պես եղավ ու հասկացա, թե ինչու հույն արձանագործները, որ գրեթե աստծուն էին հասնում, չէին քանդակում մարդու բիբը, որովհետև բիբը կոնկրետ է դարձնում մարդու հայացքը և ուրեմն՝ կարճատև, անցողիկ, մինչըեռ աստվածները մշտնջենական պետք է լինեին և նրանց հայացքը՝ հավիտենական, և մարդն էլ, քանի որ հերոսանում և աստվածանում էր, ուրեմն և նույն ձևով էր քանդակում:

Այստեղից մի ուրիշ միտք՝ այն է՝ թե ինչ կոնկրետ է - կարճատև և ու անցողիկ - ուրեմն արվեստը, որ հետապնդում է ռեալիզմը - անցողիկ և կարճատև է և չի կարող հասնել արվեստի այն բարձրությունին, որի առարկան ռեալիզմից այն կողմ է՝ տևական և մշտնջնական:

\* \* \*

Մարդու հոգեբանությունը այնպես է կերտված, որ նա սիրում է նորից և նորից վերապրել մի անգամ ապրած զգացումը, տպավորությունը, վերիիշել, մտովի վերակենդանացնել դրվագները: Վե-

րապրելու զգացումը գերազանցապես մարդկային է, մարդուն հատուկ: Չէ՞ որ մարդը անցածով է հաստատում ներկան, և եթե չլիներ երեկը, ինչո՞վ կիմանայինք այսօրը և վաղը: Ժամանակը և տարածությունը չափվում են անցածով:

Վերապրման զգացումը հաճախ դաշնում է ստեղծագործութան աղբյուրը: Կրոյք՝ վերապրման հոգեվիճակ չէ, երբ նկարիչը կտավին է հանձնում իր տեսած բնապատկերները՝ լեռը, ծովը, անտառը, բնությունը փոթորիկի և խաղաղ պահերին, որոնք իր մեջ ապրումներ և հույզեր են առաջացնում:

\* \* \*

Արվեստը մի անավարտ կամուրջ է՝ զգված կյանքի անեգրության վրա, որի մի ոտքը հենված է կյանքին, իսկ մյուս ոտքը մեկնված է դեպի անեղորություն... Ամեն մի հաճար ներկայացնում է այդ ոտքը, որպեսզի գտնի երկրորդ հենարանը... և այդպես անվերջ... Դրա համար արվեստը մարդկության լավագույն իղձերի անվախճան պատմությունն է...

\* \* \*

Արվեստագետը պետք է լինի աղավնու պես միամիտ ու օձի պես խորագետ, այսինքն՝ նա պետք է լինի շատ զարգացած և իմաստում, բայց իր ստեղծագործության ընթացքում պետք է մոռանա ամեն ինչ և միամտորեն մոտենա իր գործին:

\* \* \*

Արվեստը խորհուրդ է, և արվեստագետը՝ քուրմ... Ամեն մի մտադրություն՝ արվեստը ծառայեցնելու այլ նպատակի, սրբապետություն է, քանզի սիրո մեջ ամեն ինչ, որ սիրուց բացի որևէ ուրիշ բան է հետապնդում, անբարոյականություն է...

\* \* \*

Ոչինչ չի կարող ապրել անմիջավայր, չեզոքության մեջ. տիեզերքը կողորդինացված, համագործակցված արարչություն է: Այս օրենքի հիման վրա է, որ արվեստի ստեղծագործությունն իր բոլոր մանրամասնության մեջ պետք է համագործակցված լինի, քանի որ արվեստը նույնպես մի բնուրյուն է...

\* \* \*

Նկարիչները չեն դառնում նկարիչ, նրանք Աստծո ներշնչմամբ են բերում իրենց զոհաբերությունը արվեստին, նրանք ծնվում են նկարիչ:

\* \* \*

Արվեստագետները պետք է ձգտեն հեղափոխական լինել արվեստում, բայց ոչ հեղափոխական՝ հեղափոխական լինելու համար:

\* \* \*

Առանց գրագիտության ոչ մի արվեստ չի կարող լինել և երբեք էլ չի եղել:

\* \* \*

Բնության ուսումնասիրությունը և բնության ուսումնասիրության անհատական տրակտովվկան է արվեստը:

\* \* \*

Գեղանկարչությունը մտավոր պյուղես է: Եթե խորանանք ճանաչված գեղանկարիչների ստեղծագործությունների մեջ, անմիջապես նկատելի կդառնա աչքն ու վրձինը մտքով գինելու նրանց ցանկությունը:

\* \* \*

Իսկական գեղանկարչությունը նկարչի գրած կյանքի գիրքն է, միայն թե այդ գիրքը պետք է կարողանալ կարդալ:

\* \* \*

Գեղանկարչությունը չպետք է նայել լուսանկարչական ապարատի օբյեկտներից: Բայց մենք՝ նկարիչներս, այնուհանդերձ շնորհակալ պիտի լինենք լուսանկարչությանը, որ գեղանկարչությունը ազատեց փաստագրական ժանր լինելու ժանր պարտականությունից:

\* \* \*

Ինձ համար միշտ կարևոր է եղել գիտենալ, ինչ եմ ուզում, ինչին եմ ձգտում: Փարիզում եղած ժամանակ, երկար վեճերի ըն-

թագքում ես միշտ պաշտպանում էի այն տեսակետը, որ նկարչությունը նախ և առաջ մտքերի զարգացման, մտածողության երևույթ է: Եթե լուրջ մոտենանք ու նույնպես լրջորեն քննարկենք հայտնի արվեստագետների ստեղծագործության ձեռագիրը, ապա միշտ կզտնենք և կտեսնենք նրանց ձգտումը՝ հագեցնել իրենց վրձինը և աչքը մտքով, արտահայտչական միջոցների որոնման նոր մտածելակերպով:

\* \* \*

Նկարի մեջ արժեքավորը ոչ թե այն է, ինչ նկարված է, այլ այն, ինչ նկարված չէ. նկարի արժեքը անտեսանելի է...

\* \* \*

Իսկական գեղանկարչի համար շատ կարևոր է գոնե մի քիչ մարգարե լինել՝ այսօրվա մեջ տեսնել վաղը, թեև նկարչի ստեղծագործության մեջ գլխավորն այն է, թե ինչ է նա ստեղծում, ում է ծառայում, ինչին է խոնարհվում:

\* \* \*

Ամեն արվեստ արտահայտում է իր ժամանակի իդեալը, ուրեմն՝ հասկանալու, ճաշակելու համար պետք է հասկանալ այդ ժամանակի իդեալը և այդ ժամանակի միջոցները, արտահայտչական տեխնիկան:

\* \* \*

Վերացական արվեստ չկա, արվեստը միշտ կոնկրետ է. ուրիշ կերպ չի կարող լինել:

\* \* \*

Արդիական արվեստ: Արդիական արվեստն ունի իր օրենքները: Այն անարխիա և տգիտություն չէ. խախտումը պետք է լինի պատճառաբանված, հիմնավորված:

\* \* \*

Արվեստը զբաղմունք չէ, այլ կուլտուրա:

\* \* \*

Նախև և առաջ պետք է ազատվել ամեն տեսակի, նույնիսկ քիչ քաղցր գույներից և գույնի էժանագին հասկացողությունից: Նկարի վրա չպետք է երևան ներկը, չպետք է երևան գույները. դա քայլ առաջ կլինի Սեզանից: Բնությունը բաղկացած է մատերիալից և ոչ թե գույներից, գույնը պետք է ազնվացնել, խտացնել, գույնը պետք է մատերիլիզացիայի ենթարկել այնքան, որ առաջին հայացքից թվա նույնիսկ անգույն:

\* \* \*

Արվեստի քննադատը գողի նման բոլոր փակ դրները և պատուհանները բացելու համար պետք է ունենա ամեն տեսակի ու ձևի բանալիներ: Իսկական քննադատը պետք է ի հայտ բերի, ինչ թաքնված ու ծածկված է: Եթե նա չունի բանալիներ, ինչպես որ է մեր քննադատությունը՝ գրեթե առանց բացառության, ոչ թե բաց է անում փակվածը, այլ բավարարվում է գործի այուժետային վերլուծությամբ, գույների և ձևերի նկարագրությամբ, ծննդյան ու մահվան թվականներով՝ կենսագրական տվյալներով: Նա երբեք չի թափանցում գործի ներքին էության մեջ, մերժում և անտեսում է իսպառ՝ առանց հասկանալու արժեքը:

Գուցե թե կարող են ասել, թե ինչու գործը չպետք է լինի այնքան պարզ ու հասկանալի, ինչու արվեստագետն իր միտքը չպետք է կարողանա բոլորին հասկանալի և մատչելի լեզվով ասել: Արվեստի գործը տարբերվում է գիտական մտքի գործից հենց նրանով, որ այնտեղ գործում է միայն միտքը (առավելապես), իսկ արվեստի գործի մեջ մտքի հետ գործում է ենթագիտակցությունը, որը հենց իր արվեստագետի համար ականա և մրին է: Եթե արվեստագետն իր գործի բոլոր մանրամասները մտածել, անցկացրել է մտքի կոնտրոլով և ոչինչ չի թողել ենթագիտակցությանը, ապա այդ գործը կլինի կամ սոսկ արհեստի գործ կամ, լավագույն դեպքում, գիտական մի աշխատություն:

...Արվեստի գործը, բարձր մտածողության արգասիք լինելով, առավելապես սիրո և գեղեցիկի գործ պետք է լինի, իսկ չէ՞ որ սիրում են ոչ թե գլխով, այլ սոտով. գեղեցիկը չի կարելի նորմաների ենթարկել. նա սուբյեկտիվ է: Արվեստագետը հանրային «ես»-երի, ճաշակների, ազգային բնորոշ նախասիրությունների կիզակետն է: Այդ կիզակետը տվյալ ժողովրդի, տվյալ ժամանակի եպիտակ:

ճաշակն է, որը հետագայում դարերի միջով մեզ համար դառնում է հասկանալի ու սիրելի, իբր մեր կյանքի մի անցած նասի, ապրած մի կյանքի, մեր «ես»-ի պեսպեսություն:

\* \* \*

Ամեն ինչ ասել՝ կնշանակի ոչինչ չասել... Երբ մի որևէ արվեստի գործ հասնում է կատարելության, այն չի բավարարում մարդուն, որովհետև դադարում է մարդկային լինելուց: Մարդը ինքը անկատար է և ապրում է, երբ փնտրում է կատարելություն, այդ փնտրութքը հենց կյանքն է:

\* \* \*

Շատերը կարծում են, որ «ինքնուս» նկարիչներին կարելի է ուսման տալ և կատարելագործել նրանց արվեստը: Սա միանգամայն սխալ և կործանարար տեսակետ է: Այդ «ինքնուս» նկարիչները, եթե նույնիսկ «ինքնուս» են, ապա երբեք թերուս չեն, և նրանց հետ վարվել իրեն աշակերտի, բացատրել նկարչական կանոնները, դիսցիպլինաները, գույների և գծերի պերսպեկտիվան՝ կնշանակի կործանել նրանց...

\* \* \*

Ժողստեղծագործության արվեստը մեր առաջ բաց է անում մարդու հոգու խորքում անաղարտ մնացած այն (նախնական) զգացումը, որ նա ունի գեղեցիկի և բնության հանդեպ ու դրանով իսկ, իբր մի փորձաքար, ստուգում է, թե մեր դարի արվեստը և մնացյալ բոլոր երևույթները որքան մարդկային են մնացել:

\* \* \*

Նկարչությունը բոլոր արվեստներից և նույնիսկ գիտությունից ավելի կոնկրետ է, երկու անգամ երկուն վերացական և ընդհանրական մեծություն է՝ առանց գույնի, առանց համի, առանց հուրի, առանց անհատականության: Նկարիչը պարտավոր է ներկայացնել ամեն ինչ կոնկրետ և որոշակի:

\* \* \*

Պատկերազարդումը լրացնում է, ինչը որ չի կարող մարդկային լեզուն կոնկրետացնել, դարձնել տեսանելի, ինչ որ գրողը զգացել է ու երևակայել: Դժբախտաբար, շատ դեպքերում նկարագարդումը չի համապատասխանում տեքստին, իսկ հաճախ էլ նկարիչը այն դարձնում է առանձին գործ և նույնիսկ նկարում յուղաներկով: Յուղաներկը երբեք չի կարող թարգմանվել տպագրական տեխնիկայով, որովհետև տպագրության մեջ գործածվում են այլ ներկեր:

Զեկավորումը կոչված է ավելի ցայտուն դարձնելու գրողի գործը, մինչեւ յուղաներկը ինքնագոյն է: Բայց որովհետև ներ արվեստագետներից շատերը դեռևս պարզ չեն զգում նկարչական արվեստի առանձնահատկությունները, շատ անգամ գրական նյութը վերածում են նկարի, այդ պատճառով էլ ստացվում է այս խառնաշփոթը, երբ հաճախ նկարազարդումը դառնում է ինքնագոյն, իսկ յուղաներկ գործը՝ գրական նկարազարդում:

\* \* \*

Թատերական ձևավորումը ներկայացնան համար նույնն է, ինչ-որ երաժշտությունը, նվազախումբը օպերայի համար: Այս գաղափարը առաջին հայացքից կարող է թվալ տարօրինակ և ոչ համահունչ: Ներկայացնումը սկսելուց առաջ մենք լսում ենք օպերայի նախերգանքը, որը հաղորդում է հիմնական տրամադրությունը, երաժշտության թեման և, որ գլխավորն է, հիմնական գաղափարն ու ոճը: Նախերգանքը մեզ նախապատրաստում, տրամադրում, առաջնորդում է: Նույնը անում է թատերական նկարիչը: Բեմի վարագույրը մեզ տրամադրում, հուշում և նախապատրաստում է ընկալելու պիեսի բնույթը ու գլխավոր գաղափարը:

\* \* \*

Իր գոյություն ունի շնորհիկ ֆորմայի, բայց չի նշանակում, թե դրանք միևնույն բաներն են:

Արվեստի ստեղծագործության արժեքը միայն ֆորմայի մեջ է, փոխվի ֆորման, կփոխվի և սյուժենը, բովանդակությունը: Ֆորման կենտրոն է, որի շուրջը պտտվում է ամեն ինչ:

Արվեստում նոր ֆորմաներ փնտրելը առաջ է բերում նոր ուղղություններ:

\* \* \*

ՈԵՆԵՍԱՆՍՐ ԾՂՆԱՐՍՈՒԹՅԱՆ և գեղեցկության անհագուրդ ծարավի շրջանն էր՝ տարված հունական կուլտուրայով, մեծ և հոյակապ պրոյեկտներով:

Լեռնարդոն կուլտուրային տվեց ավելի մեծ իներցիա, քան իր ստեղծածն էր: Մարդիկ ունեին մեծ և անդունդի պես խոր հավատ, զգացնունք, և դրա հաճար կատարվեց մարգարեի խոսքը, որ ասում էր. «Եշմարիտ ասում եմ ձեզ՝ Եթե մանանեխի չափ հավատք ունենաք, կասեք լեռանը՝ շարժվիր և ծովը ընկիր, լեռը կընկնի ծովը», և Լեռնարդո դա Վինչին շարժեց լեռը:

\* \* \*

Ոեալ է այն աշխարհը, ուր ապրում է մարդը, հետևաբար այդ աշխարհին արտացոլող արվեստը կլինի ռեալիզմ:

\* \* \*

Նատուրալիզմ՝ իբրև արվեստի մի շրջան, կարելի է պայմանականորեն ընդունել, բայց այն՝ իբր փիլիսոփայական բնորոշում, երբեք չի կարող հանատեղվել արվեստի հետ: Եթե արվեստ է, չի կարող լինել նատուրալիստական, որքան էլ, որ լինի մանրամասն, քանի որ առկա է արվեստագետի ինտերպրետացիան:

\* \* \*

Բոլոր արվեստները ռեալիստական են, և չկա ռեալիզմից դուրս արվեստ:

\* \* \*

Արվեստագետի և տիրողների միջև բացված է մի վիճ: Նրա գործերը զարդարում են պալատները, տաճարները, բայց ինքը նկուղներում է ապրում՝ հաճախ մոռացված. նա հասկացված չէ...

\* \* \*

Արվեստագետի նուրբ և զգայուն հոգին ասում է օրենքը, որովհետև տեսնում է, որ այն ծառայում է ուժեղներին ու հարուստներին, և ահա նա փախչում է օրենքից, ստեղծում իր ուրույն աշխարհը...

\* \* \*

Իսկական արվեստը հուզիչ է, ցնցող, շատ անգամ անողոք ու տանջող, այդպիսի արվեստի խնդիրն է իր հոյակապ ծգտումներին լուծում տալ իր տրագեդիայի բարձունքից: Արվեստը պարուն է մարդկային հոգու՝ էմոցիայի ծայրահեռ շարժում: ահա մշտնջենավոր բովանդակությունն արվեստի:

\* \* \*

Պատերազմը, ռումբերն ու թնդանոթները անցողիկ են, իսկ գեղարվեստը մշտնջենական է:

\* \* \*

Գեղարվեստը միշտ եղել է փոքրամասնության հաղթությունը մեծամասնության վրա:

\* \* \*

Բավական է արվեստագետը դուրս գա սովորականի նախադրված շրջանակից, խախտի կանոնը, որ հասարակությունը հարձակվի նրա վրա՝ նրան հայտարարելով «խելագար», «անամոք հեղափոխական», կամ, հարայ կանչելով, աղաղակի. «Այլասերվում ենք, բարբերի անկում, մարդկության կործանում», և Աստվածաշնչից էլ օրինակներ բերի՝ «ճշմարտությունը» ապացուցելու համար:

\* \* \*

Ավելի բերև և ստոր բան չկա, քան հասարակությանը բավարարելը և հաճոյանալը՝ շոյելով նրա ավանդական և տափակ ճաշակը: Նոր Գեղարվեստը հասարակությունից ավելին չէր սպասում, քան բնագրական լայիրշ սոլոցներ, որովհետև Գեղարվեստը ոչ միայն ծնվում է իր ժամանակին, այլև առաջ է անցնում այդ ժամանակից և դրա համար չի հասկացվում:

\* \* \*

Նոր Գեղարվեստի էռթյունը Գեղեցիկի հիմ՝ ավանդական հասկացողության և նոր՝ ազատ, անհատական ըմբռնման պատերազմն է:

Եսքետիկան դոգմա չէ, նա միայն ցույց է տալիս, չի ենթարկ-

Վում կանոնի, այլ նկարագրում է ընդհանուր օրենքները:

Գեղարվեստի փիլիստիվայությունը չի որոշում, չի ցուցանում, թե գեղեցիկը բարոյական իդեալի արտահայտությունն է կամ՝ գեղեցիկը աներևույթ ձևակերպումն է, կամ՝ գեղեցիկը՝ մարդկային կրթերի արտահայտությունն է. Նա չի ասում, թե իտալական գեղարվեստը մի սիրիիր՝ նա այսպիսին է, սիրիր հունականը, այն ուսումնասիրում է գեղարվեստը իբր ամբողջ մարդկության հոգու արտահայտություն:

\* \* \*

Արվեստն է Աստծուն մոտենալու ճանապարհը, և գեղարվեստը մի աշխարհ է, որտեղ մարդը երջանիկ է, վեհ և ուժեղ: Արվեստը մարդկային հոգու, ենողիայի պարուն է: Արվեստը ինքը հոգին է: Արվեստագետի հոգու մեջ է մտնում գաղտնի Ինքը՝ Աստված, և ցույց է տալիս նրան՝ ընտրյալին, աստվածային ճանապարհը:

Ի՞նչ է գեղեցկությունը: Գեղեցկությունը մի ուժ է, ինչպես մագնիսականությունը, էլեկտրականությունը, ջերմությունը, ասում են շատերը՝ գեղարվեստն այդ ամենն աշխատում է հավաքել, որսալ, արտահայտել:

Գեղեցկությունը արդյոք մի հարաբերական գաղափար չէ<sup>o</sup>, որ կախում ունի մեր հոգու բնակազմությունից: Մի բան ինձ համար գեղեցիկ է, մյուսի համար տգեղ, ուրեմն՝ բացարձակ գեղեցկություն կա<sup>o</sup>, թե ոչ:

Գեղեցիկ է այն ամենը, ինչ որ մեզ ապրում է պատճառում: Սա անհատական զգացողություն է և չի կարելի որոշակիորեն սահմանել:

Գեղեցիկի, գեղարվեստական ապրումի ձևակերպումն Արվեստն է:

Ֆորման միջոց է գեղեցիկը արտահայտելու համար:

\* \* \*

Ամեն մի իսկական նկարիչ երազում է հասնել երեխայի անկենությանը, նրա անմիջականությանը, երբ աշխարհը տեսնում է առանց կողմնակի միջամտությունների և ազդեցությունների՝ մանկական աչքերով:

\* \* \*

Նկարչությունը բարու պատկերացումն է, նաև բարու պաշտպանությունը:

\* \* \*

Տարբեր ոճերի, տարբեր սկզբունքների ներկայացուցիչները միմյանց հետ կարող են տարածայն լինել և նույնիսկ միմյանց պատերազմ հայտարարել: Ոչինչ չունեմ, ուղղությունների կոիվ է, թեև ամեն ինչ ի վերջո որոշում է ժամանակը: Եվ դա արվեստը մղում է առաջ: Սոսկալի է, երբ տարբեր ոճի, տարբեր ուղղության նկարիչները միավորվում են, մի ճակատ կազմում և կովում մեկի դեմ, ինչ է թե՝ ընդունելի չէ կամ իրենցից ավելի է տաղանդավոր: Սա արդեն աղետ է:

\* \* \*

Ասում են, թե ես հարել եմ ֆորմալիզմին: Ինչպե՞ս թե հարել եմ, երբ ես պարզապես ֆորմալիստ եմ:

\* \* \*

Երբ ես գտնվում էի Խոալիայում և համարձակություն ունեցամ ի քանի գործ ստեղծել Միքելանջելոյի հայրենիքում, փողոցով անցնելիս իմ հետևկից լսում էի շշուկներ՝ արտիստ է, արտիստ: Նրանք գիտեին, որ մի օտարերկուացի, որ դեռ նոր է արվեստում ուսոր ծգում, չի կարող զարմացնել իրենց, սակայն նրանք գիտեին նաև, որ նա, ով փորձում է շարունակել դարերից ժառանգված արվեստի գեղեցկությունը, արժանի է հարգանքի, ու նրա կողքով անցնելիս հարկ է գլխարկ համել...

\* \* \*

Նկարչությունը նախ ձեռք է, հետո աչք և ապա՝ ոգի: Այս երեքը միասին մեկ-մեկ է պատահում: Մեծ մասամբ աչքն ու ձեռքը լինում են, բայց չի լինում ոգին: Եթե ոգի չկա, կա նկարչություն, կա վարժություն, նույնիսկ վարպետություն, բայց ոչ արվեստ:

Ինձ համար կարևոր ոգին է: Ինձ համար չկա տաղանդավոր մարդ, եթե նա ոգի չունի: Ոգուց է ծննդում ամեն ինչ՝ ամեն արժեք, ամեն զանձ: Ոգին է մարդկությունն առաջ մղում:

\* \* \*

Յուշերը հնացած պատկերների նման են, որոշ մասեր՝ ջնջված, դժգունած, որոշ մասերն էլ՝ այդ գունաթափ ֆոնի վրա՝ ավելի ցայտուն ու պայծառ: Ժամանակը մի կողմից ավերում և ջնջում է, միաժամանակ ամեն ինչ դարձնում ավելի մեղմ՝ սերը, ատելությունը, մի տեսակ լիրիկական խավով է պատում դեմքերն ու դեպքերը, և այդ խավը այնքան քաղցրություն ու ինաստ է տալիս կյանքի անցողիկությանը:

\* \* \*

Արվեստի գործը, բարձր մտածողության արգասիք լինելով, առավելապես սիրո և գեղեցիկի գործ պետք է լինի. իսկ չէ՞ որ սիրում են ոչ թե գլխով, այլ սրտով. գեղեցիկը չի կարելի նորմաների ենթարկել. նա սուրբեկութիվ է: Արվեստագետը հանրային «Ես»-երի, ճաշակների ազգային բնորոշ նախասիրությունների կիզակետն է: Այս կիզակետը տվյալ ժողովրդի, տվյալ ժամանակի էպիխալ ճաշկն է, որը հետազայում դարերի միջով մեզ հանար դառնում է հասկանալի ու սիրելի, իբրև մեր կյանքի մի անցնած մասի, ապրած մի կյանքի, մեր «Ես»-ի պեսպեսություն:



Արևելուհիներ



Կինը բանալիով



Զիեր - մարդիկ

## ՄՏՔԵՐ ԵՎ ԱՍՈՒՅԹՆԵՐ

\* \* \*

Երբ մարդ կորած է բոլորի համար, նա գտնում է ինքն իրեն... և իր Աստծուն...

\* \* \*

Խոսել մարդիկ սովորում են իրարից, իսկ լռելը՝ Աստվածներից:

\* \* \*

...Արևը ծովերից, ջրերից ամպ է ստեղծում բարձր երկնքում և նորից, իբրև անձրև, թափում երկրի վրա ու կյանք տալիս հողին, մարդուն, ծիլ ու ծառին... Դանձարը ժողովրդի իմաստությունը հավաքում է իր բարձր իմացության մեջ, արվեստ դարձնում և նորից վերադարձնում ժողովրդին՝ տալով նրան նոր ուժ, նոր կյանք...

\* \* \*

Ուժը հակառակորդի թուլությունն է, ուստի և հարաբերական է. սակայն այն նաև բացարձակ է ամեն էակի մեջ, սկսած ամենափոքրից մինչև ամենամեծը, հակառակ դեպքում աշխարհը գոյություն չի ունենա և վաղուց կուլ գնացած կլիներ ամենաուժեղին...

\* \* \*

ճարպկորեն լողալ մակերեսի վրա, կնշանակի ապրել իզուր, ընկղզվել նժբախս կերպով, կնշանակի՝ շահ չքողնել, իսկ լողալ, ընկղզվել. սուզվել և նորից մակերեսի վրա բարձրանալ - սա է մարդ կոչվածի արժանի կյանքը...

\* \* \*

Սերը միակ բանն է, որ ապրում է, եթե սոված է և մեռնում է, երբ կշտանում է...

\* \* \*

Մի որևէ նույնանման իրերի բազմության մեջ իրը չի փոխում ոչ իր կարողությունը և ոչ էլ իր կշիռը, բայց մարդը մարդկանց բազ-

մության մեջ փոխում է թե՛ իր կշիռը և թե՛ կարողությունը: Սրա համար է, որ մարդ փնտրում է իր մոտիկների նեղ շրջանակը. այնտեղ է, որ երևում է իր խկական արժեքը, իսկ մենակության մեջ՝ էլ ավելի...

\* \* \*

Բնազդը ամենաբարձր իմացությունն է, միլիոնավոր փորձերի եզրակացությունը... Բնազդը ուժերի և ժամանակի խնայումն է, որպեսզի նորից չփորձել այն, ինչ առեն փորձած է... Յակառակ դեպքում՝ ամեն ինչ սկզբից պետք է սկսել, և մարդը կլիներ իր նախահոր մի նախահայրը...

\* \* \*

Իմ և բույսի, գազանի կամ որդի միջև տարբերությունն այն է, որ ես ահա գրում եմ, կերտում և ժառանգություն եմ թողնում հետնորդների համար, իսկ նրանք՝ ոչ. բայց գուցե նրանք իմաստում և կատարյալ են, որ այդ բաների պետք էլ չըլնեն. չէ՞ որ, որքան կատարելության ենք մնտենում, այնքան քչանում է կարիքը և պետքը... Աստվածները մերկ են:

\* \* \*

Ո՞վ է մեզ մղում ծնվելու, ո՞վ է մեզ մղում ապրելու և ո՞վ է մեզ մղում մեկնելու այստեղից: Ոչ ոք իմացել է, ոչ ոք գիտե և ոչ ոք կգիտենա, քանզի այդ խորհուրդը հաղորդվում է միայն հենց մահվան պահին...

\* \* \*

Լուրջունն առեղծվածային պատասխան է, որ ամեն մարդ իրեն հաճելի ձևով է մեկնաբանում: Կամ էլ այն անբացատրելի է, ուստի և միշտ հարգվում է ակնածությամբ...

\* \* \*

Կյանքը սխալների ու ափսոսանքների մի շարան է, որ մարդ հույս ունի ուղղել սերունդների ընթացքում... Բայց դա էլ է պատրանք, քանզի ամեն մարդ իր ձևով է ապրում կյանքը և իր ձևով սխալվում...

\* \* \*

Ինչոր ապրում է և գոյություն ունի, իմաստուն է, քանի որ կյանքը դա փորձության մի շղթա է իր հյու սկզբից: Տգիտությունը մարդկային հարաբերական մի չափանիշ է, բնության մեջ ամեն ինչ և ամեն մի արարած, մինչև վերջին հյուլեն... իմաստուն են...

\* \* \*

Գիտությունը բնության ուշիմ և ջանասեր աշակերտն է:

\* \* \*

Կյանքն իր հանապազօրյա օրենքներով և պատշաճի նախապաշարումներով կաշկանդում է մարդուն, նրա միտքն ու հոգին... դրա համար է, որ մարդ երազների մեջ է ազատ ու անկաշկանդ...

\* \* \*

Մարդը մենակության մեջ մի աշխարհ է և աշխարհի մեջ՝ մենակություն...

\* \* \*

Աչքերի մեջ կարելի է կարդալ, թե ինչ է անում ուղեղը և ինչ են գործում ձեռքերը, բայց դրա համար պետք է գիտենալ հոգու քերականությունը, որ շատ քչերին է տրված:

\* \* \*

Մարդու ամենաազնիվ և վեխ արտահայտությունը նրա ժայտն է, քանզի մարդկային զգացումներից ամենաազնիվը վիշտն է. Վիշտն իշնում է մարդու հոգու խորքը և հաղթանակով մաքրված, փորձի ու փորձության միջով բարձրանում է ժայտի ձևով: Ժայտը այն պսակն է, որ հոգին դնում է մտքի վրա... և հոգու հարստությունն է...

\* \* \*

Յասկանալու համար չպետք է մտածել, այլ պետք է հոգու ճանապարհով հաղորդվել... Ամեն մի միտք, խորանալով, եղծանում է ինքն իրեն և փախչում: Դրա համար է, որ արվեստը մարդկային ամենաքարձր գործունեությունն է, որովհետև նա չի դիմում մտքին, նա ոչինչ չի պապուցում, փաստարկում. նա խոսում է

հոգու լեզվով... Թատրոնը, նկարը, արձանը պետք է հավատաց-  
նեն և ոչ թե ապացուցեն...

\* \* \*

Երբ սիրում ես մի կմոց, քո սերն ես սիրում նրա մեջ: Դա իր  
հետ բերում է քո ուզած գեղեցկությունը, թեև դա մի ենթագի-  
տակացական ընթացք է, և մենք այդ գեղեցկությունն ընդունում ենք  
իբրև իրողություն: Երբ մեկին նկարում ես՝ հափշտակվում ես նրա-  
նով և գուցե այդ սիրուց է, որ նրան տեսնում ես ավելի լավ, քան  
նա խկապես կա: Դու չես մտածում լավացնել նրան: Դու ուղղակի  
նրան տեսնում ես լավ: Դա հոգեկան վերագրում է:



Մելինեի դիմանկարը

## ՔՈՉԱՐԻ ՄԱՍԻՆ

Ծնվել է ապագա մեծ նկարիչը...

Եղիշե Թաղեկոսաւ

\* \* \*

Եթե ես չլինեի Մինասը, կցանկանայի լինել միայն Երվանդ Քոչարը:

ՄԻՆԱՍ ԱԿԵՏԻՍՅԱԼ

\* \* \*

Երվանդ Քոչարը վերածնողի վարպետների էր նման՝ ուժեղ տրամաբանությամբ, իմաստությամբ ու գիտությամբ:

ԱՐԱ ՃԱՐՈՒԹՅՈՒՆՅԱԼ

\* \* \*

Եթե միայն Սասունցի Դավթի հոյակապ հուշարձանն իսկ ստեղծած լիներ վարպետը, բավական կլիներ նրան մեծ արվեստագետ կոչելու: Այս ստեղծագործության մեջ Քոչարը դրսնորել է համաշխարհային և ազգային արվեստի լավագույն ավանդույթները:

ԼԵՎՈՆ ԹՈՐՍԱԶՅԱԼ

\* \* \*

Քոչարին իրավմամբ կարելի է համարել և հայկական, և ամբողջ աշխարհի կերպարվեստների առաջատար ստեղծագործողներից մեկը:

ԱԼԵԲԱՍԴՐ ԿԱՍԵՆՍԿԻ

\* \* \*

...Քո անունը, որպես մեծ քանդակագործի ու նկարչի, վաղուց հայտնի է համայն աշխարհին... Միայն Սասունցի Դավթի հոյակապ կոթողը Երևանում բավական էր, որ դու կանգնեիր վերածնության շրջանի վարպետների շարքին:

ԼԱՂՈ ԳՈՒՂԱՇՎԻԼԻ

\* \* \*

Քոչարը ճշմարտացիությամբ, ուժով և երկարակեցությամբ լի

Ակարիչ ու քանդակագործ է, վիթսարի արվեստագետ: Նրա ստեղծագործության հետ շփվելը մեծ իրադարձություն է մեզ համար:

ԹԵՂ ԲԱԼՂԵՆ  
ԳԵՐՄԱՆԱԳԻ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ

\* \* \*

...Արվեստագետ՝ խոր գիտելիքներով և տաղանդով շռայլորեն օժտված վերածնության վարպետների խառնվածքով և, որին հավասարապես Ենթարկվել են կերպարվեստի բոլոր ժամրերը՝ և գեղանկարչությունը, և արձանագործությունը և գրաֆիկական արվեստը:

ԵՂՎԱՐԴ ԻՍԱԲԵԿՅԱՍ

\* \* \*

Քոչարը հավատում էր իր ժողովրդին, նրա դավանանքին ու պայծառ ապագային: Իր այդ հավատը նա մարմնավորեց անհաղթ Դավթի կերպարի մեջ, մարմնավորեց հստակ և գուլալ ձևով:

ԱՐԱ ՇԻՐԱԶ

\* \* \*

Անսահման ուրախ ենք, որ փարիզյան քասում դու փայլեցիր իբրև աստղ... Դա հպարտություն է մեզ համար, ազգային հպարտություն...

ԱՎԻՍԱՐԱԿՅԱՍ

\* \* \*

Դա լավագույն ձիարձանն է, որն այս հարյուրամյակում, գուցե ավելի վաղ կանգնեցվել է մեր երկրում:

ԼԵՈՆԻԴ ՎՈԼԻՆՍԿԻ

\* \* \*

Քոչարը դարձավ մեկն իր ժամանակի մեծագույն արվեստագետներից, որ ելնելով ազգային ու մարդկային համադրումից, ցույց տվեց, որ ժամանակակից արվեստագետը նա է, ով իր պատմությունից է գնում դեպի գալիք ժամանակները:

ՈՈՒԹԵՆ ԶԱՐՅԱՍ

## ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻՒ ԷԶԵՐԻՑ

Ես ավելի քան երբեք համոզված եմ, որ Երվանդ Քոչարն ունի իսկապես տաղանդավոր, խոշոր գեղանկարչի տվյալներ: Նա իր բնագավառի կատարելագործման ճանապարհով առաջ է ընթանում ահօելի քայլերով, և շատ շուտով մենք նրա մեջ ուժով պատկերած կտակները դիտելու հաճույքը կունենանք:

ԿԵՍԱԸ ՍՈՐՈ

\* \* \*

Քոչարը, որը մտքերի տիրակալ է, ճկում ու բազմաբնույթ տաղանդով է օժտված:

ՈԵՅՍՈՆ ՍԵԼԻՆԳ

\* \* \*

...Երվանդ Քոչարին չի կարելի սովորական նկարիչ համարել, հանրածանոք որակումները այս դեպքում անհնաստ են դաշնում: Մե՞ծ է նա, թե՞ հանճարեղ, այս երկու բյութագրումների միջև կարելի է թերևս տատանվել, չնայած ես երկրորդի կողմն եմ:

ԱՆԴՐԵ ՊԱՍԿԱԼ-ԼԵՎԻ

\* \* \*

Երվանդ Քոչարն իր հավատամքը պաշտպանում է մեծ անկեղծությամբ ու հավատով, խանդավառությամբ, տաղանդով:  
ՍԵԼ ԷՆՅԱ

\* \* \*

Երվանդ Քոչարը հետևողականորեն ու խելամտորեն է ընթանում իր ուղիով, որը շատ հեռու է այն տրորված արահետներից, որտեղ չափազանց շատ նկարիչներ են դոփում...

ԻԼ ՂՋ ԿԵՎԼՈՒ

\* \* \*

Քոչարի արվեստին ուղղված հետաքրքիր, հետադարձ հայացքը վկայում է, որ մենք գործ ունենք ինքնատիպ վարպետությանը հիանալի տիրապետող նկարչի հետ:

ՄՈՐԻՍ ՈԵՅՆԱԼ

\* \* \*

Զեր իսկական կոչումը քանդակագործությունն է: Այն համապատասխանում է տարածության մեջ արտահայտվելու Զեր պահանջին, նաև հնարավորությունն է տալիս գերագույն օգուտ քաղելու Զեր հեղափոխական գաղափարներից, հնարամտությունից և կարողությունից:

ԼԵՈՆՍ ՈՂՋԵՆՔԵՐՈԳ

\* \* \*

Եթե կուբիզմի տեսությունը հիմնավորվում էր Եյշտեյնի, Ոինմանի և Լոբաչևսկու թեորիաներով, ապա սյուլոռեալիստական արվեստի կոնցեպցիան ամրապնդվում և շաղախվում էր Ֆրեյդի և Բերքսոնի տեսություններով: Ենթագիտակցությունն իր իրավունքներն սկսեց ներկայացնել և շատ ավելի առաջ անցավ գիտակցությունից: Արվեստագետները փնտրեցին թաքնված ենթագիտակցության «եսի» անսպասելի գեղեցկությունները: Երազի՝ թաքնված ցանկությունների, իղձերի անթույլատրելի շղթայագերումը դարձավ հոգու ազատագրման նշանը:



ԸՆՏՈԱՆԻՔ - ԱԵՐՈՒՆԴԱՆԵՐ

## ՅԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

- 1899 -** Ծնվել է հունիսի 15-ին Թիֆլիսում:
- 1909-1918 -** Սովորել է Ներսիսյան դպրոցում:
- 1914-1918 -** Հաճախել է գեղարվեստը խրախուսող Կովկասյան ընկերության նկարչական դպրոցը, սովորել է նկարիչ Եղիշ Եղիշի թաղևոսյանի դասարանում:
- 1918-1919 -** Ուսանել և ավարտել է Մոսկվայի պետական ազատ գեղարվեստական արվեստանոցներում՝ Պ.Կոնչալովսկու արվեստանոցում:
- 1919-1921 -** Նկարչություն է դասավանդել Թիֆլիսի գիմնազիաներում:
- 1919 -** 36 աշխատանքով մասնակցել է Վլագ նկարիչների ընկերության կազմակերպած երկրորդ աշնանային ցուցահանդեսին (Թիֆլիս):
- 1920 -** Մասնակցել է երրորդ աշնանային ցուցահանդեսին (Թիֆլիս):
- 1921-1922 -** Ընտրվում է «Յայ նկարիչների միություն» ցուցահանդեսային հանձնաժողովի, ինչպես նաև դառնում է «Յայաստան» (Յայ արվեստի տան) անդամ:
- 1922 -** Ապրիլին ուղևորվում է արտասահման՝ Կոստանդնուպոլսի, այնուհետև Վենետիկ, Հռոմ, Ֆլորենցիա, Փարիզ:
- 1923-1936 -** Ապրում և ստեղծագործում է Փարիզում:
- 1923 -** Բացվում է առաջին անհատական ցուցահանդեսը, որի կազմակերպիչը Արշակ Չոպանյանն էր:
- 1924 -** Մասնակցում է «Անկախականների սալոնի» ցուցահանդեսին «Յարություն» և «Փոխակերպում» կտավներով, որոնք գրավում են անվանի արվեստագետների ուշադրությունը: Ֆրանսիական մամուլում տպագրվում են առաջին հոդվածները:
- 1925 -** Երկու գեղանկարներով մասնակցում է «Ժամանակակից արվեստը» միջազգային ցուցահանդեսին Արաբի, Ղելոնեի, Կլեի, Լեժեի, Միրոյի, Պիկասոյի և այլոց հետ:
- Ստեղծագործությունները սկսում է ստորագրել թոքար ազգանվանք:
- 1926 -** “La Sacre du Printemps” պատկերասրահում բացվում է

Ե.Քոչարի գեղանկարչական և գրաֆիկական աշխատանքների անհատական ցուցահանդեսը: Կատալոգի հեղինակ՝ Վալդեմար Ժորժ:

- 1928** - «Անկախականների սալոնի» ցուցահանդեսում Քոչարի աշխատանքների նկատմամբ դրսևորվում է վանդալիզմի ակտ:
- 1929** - Հանդիպում հայտնի մեկենաս, ժամանակակից արվեստի գիտակ Լեոնս Ռոգենբերգի հետ, որը հետագայում դառնում է Քոչարի տաղանդի երկրպագուն, «Բոնապարտ» հրատարակչության սրահներում բացված «ժամանակակից արվեստի համայնապատկեր» միջազգային ցուցահանդեսում ներկայացնում է «Տարածական նկարչության» գործեր:
- 1930** - Քոչարի «Տարածական գեղանկարչությունը» ցուցադրվում է Լոնդոնի “Leicester Gallerie” պատկերասրահում:
- 1932** - Մասնակցում է Լեոնս Ռոգենբերգի պատկերասրահում կազմակերպված «Կուրիստական, սյուրբեալիստական, արստրակտ ստեղծագործություններ» ցուցահանդեսին:
- 1930-1933** - Ստեղծում է «Մարդ-քաղաք» շարքի գծանկար, գեղանկար, քանդակ աշխատանքներ:
- 1934** - “Galerie Vignon” պատկերասրահում բացվում է Քոչարի ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսը:
- 1935** - Մասնակցում է “Les Artistes Musicalistes” («Երաժշտանկարիչներ») շրջիկ ցուցահանդեսին (Բուդապեշտ, Բոնո, Պրագա):  
Քրապարակում է «ՈՒՂԵՐՉԵ», ուր առաջին անգամ ներկայացնում է «տարածական գեղանկարչության» մասին իր գաղափարները:
- 1936** - Քոչարը ստորագրում է Դիմանսիոնիզմի Մանիֆեստը, որի գաղափարները արդեն իրենց արտահայտությունն էին գտել նրա փարիզյան շրջանի ստեղծագործություններում: Մայիսին՝ իր փառքի շեմին, հայրենադարձվում է Խորհրդարձերի երկիր, բնավ չկասկածելով, որ ընդմիշտ է լքում Փարիզը:
- Վերադարձնում է Թիֆլիս, հանդիպում ազգականներին: Վրաստանի նկարիչների միության շարքերն անցնելու նրա դիմումը մերժվում է: Աշնանը տեղափոխվում է Երևան:

- 1937** - Ընդունվում է Յայաստանի նկարիչների միության շարքերը:
- 1938** - Մասնակցում է հայկական մշակույթի տասնօրյակին:
- 1939** - «Սասունցի Դավիթ» ազգային էպոսի հազարամյակի տոնակատարության շրջանակներում ստեղծում է «Սասունցի Դավիթ» ծիարձանը (գիպս տարբերակը, որը բարբարոսաբար ոչնչացվում է 1941 թվականին), էպոսի լենինգրադյան ակադեմիական հրատարակչության համար ստեղծում է գրաֆիկական աշխատանքների շարք:
- 1941** - Բանտարկվում է:
- 1943** - Ազատվում է օգոստոսի 23-ին Ներսիսյան դպրոցի ընկերների՝ Կարո Յալաբյանի և Անաստաս Միկոյանի միջամտությամբ:
- 1944-1945** - Երևանի Կ.Մարքսի անվան Պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական բաժանմունքում դասավանդում է գծանկարչություն և գեղանկարչություն:
- 1948** - Մոնաներկերի ստացման գյուտի համար ստանում է հեղինակային վկայագիր:
- 1953** - Զվարթնոցի տաճար տանող ճանապարհին տեղադրում է «Զվարթնոցի արժիվ» ուղենիշ-հուշակոթողը:
- 1956** - Ե.Քոչարին շնորհվում է Յայաստանի Յանրապետության արվեստի վաստակավոր գործիչ կոչում:
- 1959** - Երևանի կայարանամերձ հրապարակում տեղադրվում է «Սասունցի Դավիթ» ծիարձանը:
- 1960-1964** - Ստեղծում է գեղանկարչության և գրաֆիկական աշխատանքների գլուխգործոցներ:
- 1965** - Երևանում բացվում է Քոչարի առաջին անհատական ցուցահանդեսը:  
Շնորհվում է հանրապետության ժողովրդական նկարչի կոչում:
- 1966** - Փարիզում “Percier” պատկերասրահում բացվում է Քոչարի անհատական ցուցահանդեսը:  
Քրատարակվում է Վալդենար Ժորժի «Քոչարը և տարածական գեղանկարը» կատալոգ-մենագործությունը:
- 1967** - Շնորհվում է ՀԽՍՀ պետական մրցանակ:
- 1969** - Էջմիածին քաղաքի Կոմիտասի անունը կրող հրապարակում տեղադրվում է Կոմիտասի արձանը:

- 1970** - Փարիզում մասնակցում է Լուվրի սրահներում բացված «Դայ արվեստը Ուրարտուից մինչև մեր օրերը» ցուցահանդեսին:
- 1971** - Երևանում բացվում է Երկրորդ անհատական ցուցահանդեսը:  
ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով պարգևատրվում է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով:
- 1972** - Լուս է տեսնում Շենրիկ Իգիթյանի հեղինակած «Երվանդ Քոչար» ալբոնը:
- 1973** - Արևելյան ժողովուրդների արվեստի թանգարանում բացվում է Քոչարի անհատական ցուցահանդեսը (Մոսկվա):
- 1974** - Բարվում, այնուհետև Թբիլիսիում բացվում են անհատական ցուցահանդեսներ:
- 1975** - Երևանի գլխավոր հրապարակներից մեկում տեղադրվում է Երկրորդ ծիարձանը՝ «Վարդան Մամիկոնյան»-ը:
- 1976** - Ծնորհվում է Խորհրդային միության ժողովրդական նկարչի կոչում:
- 1976-1977** - Մասնակցում է «Ինքնանկարը ռուսական և խորհրդային արվեստում» շրջիկ ցուցահանդեսին (Մոսկվա, Խորհրդային մի շարք քաղաքներ, ինչպես նաև Բուլղարիա, Լեհաստան ու Հունգարիա):
- 1978** - Երևանում բացվում է Քոչարի գրաֆիկական աշխատանքների անհատական ցուցահանդեսը:
- 1979** - Վախճանվում է հունիսի 22-ին Երևանում:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱԽԿ

**Վալտեմար Ժօրժ.** Քոչար և նկարչութիւնը տարածութեան մեջ.-  
Պեյրութ: Մեսրոպ, 1972.- 62 էջ

**Իգիրյան Հենրիկ.** Երվանդ Քոչար.- Եր.: Տիգրան Մեծ, 2000.- 214  
էջ

Ագասի Արարամ. Երվանդ Կոչար.- Եր.: Հայոցական 1999.- 89 շ.

**Երվանդ Քոչար.** Ես և դուք.- Եր.: Սուլմի, 2007.- 199 էջ

**Երվանդ Քոչար.** Համատարած զգայություն //Երևան.- Փարիզ.-  
1926.- 26 օգոստոսի

**Երվանդ Քոչար.** Պարույրանի երկերի նկարազարդումները  
//Սովետ. արվեստ.- 1955.- թիվ 2.- էջ 36-38

**Երվանդ Քոչար.** Շիշմանյանի «Էղքար Շահին» մենագրությունը  
//Սովետ. արվեստ.- 1957.- թիվ 4.- էջ 56-57

**Երվանդ Քոչար.** Մի հաջողված ձևավորման մասին //Սովետ.  
արվեստ.- 1958.- թիվ 10.- էջ 50-52

**Երվանդ Քոչար.** Հուշարձան ժողովորդի հերոսին //Երևան.- 1959.-  
5 դեկտեմբերի

**Երվանդ Քոչար.** Պիկասո //Գրական թերթ.- 1966.- 4 նոյեմբերի

**Երվանդ Քոչար.** Ստքեր և ասույթներ //Գարուն.- 1979.- թիվ 11.- էջ  
65-66

[Երվանդ Քոչարն ասում էր...] //Սովետ. արվեստ.- 1989.- թիվ 7.-  
էջ 23

[Ասույթներ] //Դայություն.- 1997.- 10 նոյեմբերի

**Երվանդ Քոչարի հետ** //Վերածնված Հայաստան.- 1989.- թիվ 12.-  
էջ 46-47

**Բարսեղյան Արարատ.** Օրի Բունաթիան.- Ե.: ՅԱԸ, 1970.- էջ 38

**Մաեստրո Քոչարին** իր հարյուրամյա տարելիցի առթիվ //In Vitro.-  
1999.- թիվ 4.- էջ 10-39

**Խսահակյան Վիգեն.** «Փարիզ. Քոչար. Անցած օրեր...».- Եր.:  
Տիգրան Մեծ, 2006.- 330 էջ

**Իգիրյան Հենրիկ.** Հովհաննեանից Մինաս.- Եր.: Տիգրան Մեծ,  
2001.- էջ 135-231

**Խսարեկյան Էղվարդ.** «Երվանդ Քոչար». փորձ դիմանկարի  
//Գրական թերթ.- 2000.- 31 դեկտեմբերի

**Զարյան Ռութեն.** Երվանդ Քոչար //Հուշապատում. գիրք 3.- Եր.:  
Սովետ. գրող.- 1981.- էջ 318-345

- Թերզյան Կլարա.** Բույլ մեծաց: Ակնարկների և հարցագրույցների ժողովածու.- Եր.: Գրաբեր, 2001.- էջ 12, 14-15
- Թոքմաջյան Լևոն.** «Խոսք իմ մասին».- Եր.: Յայաստան.- էջ 7; 13
- Յայրապետյան Ռիմա.** Դեպի ակունքը լուսի //Հոգևոր Յայրենիք.- 2004.- հունիս
- Մարտիրոսյան-Քոչար Լալա.** Երվանդ Քոչարի կյանքը և ստեղծագործությունը //In Vitro.- 1999.- թիվ 4.- էջ 12-17
- Չաքմաջյան Արտոն.** Դիմապատկերներ.- Եր.: Սարգիս Խաչենց, 2006.- էջ 21
- Каменский Александр. Путь мастера //Неделя.- Москва.- 1974.- N12.- 18-24 марта
- Воронов Никита. Советская монументальная скульптура 1960-1908.- Москва: Искусство, 1984.- с. 58, 217
- Исаакян Виген. В Париже //Урарту.- 1993.- N6.- с. 14-15
- Зингер Леонид. Советская портретная живопись 1930-1950-х годов: Москва, 1989.- с. 78, 79, 211
- Zurabyan Telman. Yervand Kochar //The Armenian Observer.- Hollywood.- 1974.- 27 march
- Hoog Michel. Quelques précurseurs de L'Art d'aujourd'hui //La Revue du Louvre et des Musées de France.- Paris, 1966.- N3, p. 165-172

## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

### **Կազմողի կողմից**

Ինքնակենսագրություն .....	4
Քոչարն իր ստեղծագործությունների մասին .....	8
ա) Տարածական նկարչություն .....	8
բ) «Սասունցի Ղավիթ» հուշարձանի պատմությունից .....	11
գ) «Սասունցի Ղավիթ» էպոսի նկարագարդումներից .....	14
դ) Իմ «Վարդան Մամիկոնյանը» .....	15
ե) «Պատերազմի արհավիրքը» կտավի մասին....	19
Պատարիկներ.....	21
Մտքեր և ասույթներ .....	37
Քոչարի մասին .....	41
Հիշարժան տարեթվեր .....	45
Օգտագործված գրականության ցանկ .....	49

# **ԱՐՎԵՍՏԻ ԴԱՍԵՐ**

## **Մատենաշար**

### **ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ. ԵՐՎԱՆԴ ՔՈՉԱՐ**

Կազմող՝ ՌԻՄԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Խմբագիր՝ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Սրբագրիչ՝ ՅԱՍՍԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Համակարգչային շարվածքը՝ ԼՈՒԻՆԵ ԱՐԱՐՈՆՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝ ՆՈՒՆԵ ՍԱՄՎԵԼՅԱՆ

---

Թուղթը՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ:  
Ծավալը՝ 1.6 տպ. մամուլ: Չափսը՝ 70x100 1/32: